Սագօն իր երազների մէջ նոյնպէս ծիծաղելի էր, որպէս արթուն ժամանակը. մէկին ջիգրացնում է նա: Նրա դէմքի վրայ նկատւում էին հեգնական ծամածռութիւններ:

Արշալոյսը սկսել էր շառագունել: Ամէն կողմից լսելի էին լինում թռչունների ուրախ, ծլվլուն երգերը: Մինարեթի վերի յարկերում բուն դրած վայրենի աղաւնիները այս կողմ եւ այն կողմ էին թռչկոտում եւ նրանց թեւքերի թափ տալուց աշտարակի կամարները թնդում էին խուլ որոտմունքով:

Ես ձանձրացայ երկար պառկելուց, վեր կ'ացայ, մօտեցայ Կարօյին եւ, նրա վերարկուն իր վրան ծածկելով, կանգնեցայ նրա մօտ: Նա տարածած էր գետնի վրայ, որպէս մի ահագին պղնձէ արձան, մթին, հսկայատիպ կերպարանքով: Նրա լայն կուրծքը անհանգիստ կերպով բարձրանում եւ ցածրանում էր: Երկար ես խորին պատկառանքով նայում էի այդ վեհափառ պատկերի վրայ, մինչեւ իմ սիրտը լցոեցաւ մի ջերմ, եղբայրական զգացմունքով. ես խոնարհոեցայ եւ մի համբոյր քաղեցի այն շրթունքներից, որոնցից շատ անգամ լսել էի այդ խօսքերը. «Ֆարհատ, ես քեզ շատ եմ սիրումէ:

Նա մի թեթեւ շարժում գործեց եւ կրկին խորասուզոեցաւ ծանր քնի մէջ: Ես հեռացայ:

Դեռ երեխայութեան ժամանակից, այն աւերակները, որոնցով շրջապատոած էի, այն մինարեթը, որի մէջ այժմ գտնւում էի, միշտ մի առանձին դիւթական տպաւորութիւն էին գործում ինձ վրայ: Ես լսել էի նրանց մասին շատ առասպելական զրոյցներ: Բայց առաջին անգամն էր, որ գտնւում էի այնտեղ, թէեւ այդ աւերակներն ունէին մեր քաղաքից հազիւ քառորդ մղոն հեռաւորութիւն: Մարդիկ, մի առանձին սնահաւատութեամբ, վախենում էին մօտենալ նրանց: Բայց նոյն ժամուն ինձ եւս անհասկանալի մի հետաքրքրութիւն քարշում էր իմ սիրտը դէպի վեր, դէպի այն հսկայական շինոածքի գագաթը. այնտեղից ես ցանկանում էի նայել դէպի աստուծոյ գեղեցիկ աշխարհը:

Խորին երկիւղածութեամբ ես ոտք կոխեցի առաջին սանդուղքի վրայ, սկսեցի բարձրանալ: Ամէն տեղ տիրում էր դատարկութիւն. ամէն տեղ ոչ այնքան ժամանակը, որքան կոյր խառնիճաղանջի մոլեռանդութիւնը աւերակ էր դարձրել ճարտարութեան այն հրաշալի գործը, համարելով նրան մի կախարդոած մնացորդ «ջինների» թագուհու ամրոցից: Ես բոլորովին յոգնեցայ, մինչեւ հասայ մինարեթի գագաթը: Ա՜խ, որքան բարձր էր նա: Ամբողջ սալմաստը, լուսաւորոած արեգակի առաջին ճառագայթներով, դրած էր իմ առջեւ, որպէս մի գեղեցիկ պատկեր, նկարած զանազան գոյներով: Գիւղերը, այգիները, ձեռնատունկ անտառները, լաւ մշակոած դաշտերը, բոլորը